

- 86 Եւ նոյն հատեալ մնացեալ յասնիկ
 Լըրով փառաց Սարգսի քաղցրիկ՝
 Աճէր անդրէն յայն սիրտ լըռիկ,
 Եւ բողբոջիւր իսկ սակաւիկ :
- 87 Ուստի թոյլ տայր նոցուն բըզզել,
 Ջառ իւր Սարգսէ իսկ բողբոջել,
 Որ եւ հաճէր ըզնա կոչել,
 Հանդէպ նոցուն լ' այլոց դատել :
- 88 Տարմն ապաքէն ճըպուանց բըզզաց
 Ջճաւալասանն մատնէր դաստաց
 Գատաւորին կընգղաւորաց
 Գըրով թուոց նորուն մեղաց :
- 89 Աւաղ արդեան աւուրց պահուց
 Այլ ս՛հ զարդի բարուց, վարուց,
 Որպէս ողբայր ի վաղընջուց
 Մինն ի հընոց քաջաց դասուց :
- 90 Արդ երբ յայն դատ կողմն ամբաստան
 Ի Սարգըսէ փաստիւ ունայն
 Խընդրէր ըզբաշին Երուսաղմեան,
 Բազմեալքն անդէն տիր զարմանան :
- 91 Թէպէտ Յակոբ բարուք գիտէր,
 Թէ նա վաղ իսկ վըճարեալ էր
 Ըզտուրօքն որ Սուրբ Շիրմին էր
 Այլ ի չըքմեղս եղեալ լըռէր :
- 92 Ջի ոչ կարծէր՝ թէ տակաւին
 Ունէր Սարգիս յիւրում ձեռին
 Ջընկալման գիրն՝ որ Գրիգորին,
 Յոր կայր գիր, կնիք իւրն առանձին :